Էլիզան մեկ խոսքով, ձեռքի մեկ շարժումով արթնցուցած էր,
հրաբուխ հեղակործ պոսթկումի պես գուրս ժայթեցուցած էր
այդ զգայնու Հոգին բովանդակ եսի, զեղեցկությունն մարմնա-
կան զայիլությունն զորկ գտնվելուն աշնաւի ու անշարժանելի
վիշտն, որ միշտերուն աստիճանցույնն ու է՞ն ամերիչն է: Իր այդ
անակնկալ փոփոխումի մասին զրացիներուն ուզգած հարցումնե-
րուն սա խոսքով միայն պատասխանեց Կումիկ:

— Պան մը չէ, կատենի:

Բայց չէր անցներ. օրե օր կը նիշարծար անիկա, այտերը
կը Հալեին ու ոսկորներուն ձեռքը կը ցուցնեին. աշվըներուն
պարացող բոցը կը մարեր զգալի կերպով. կոնակն ավելի կը
շեշտեր իր այտոցը: Դիշերներն, երբ խանութը գոցեր և առան-
ձին մեար, կը Հանվեր, շապիկն ալ կը Հաներ և ձեռներովը շա-
րումակ փուզը կը շոշափեր, կը քերթեր, կը սեզմեր՝ զայն անհնա-
ընելու հույսի զերազույն նիգով մը, բայց իր աշխատանքն ավելի
կը սասակացներ իր Հոգեկան շարշարանքը, սիրտին հատումը
կավելցումներ: Կանակին վրա կը պատկեր գետինը, շահալով իր
ժանրության տակ ճզմել, ճզմել գժոխային այդ ուսուցքը որ իր
կյանքը կը խորտակեր աղետայի կերպով: Չեր հարզեր:

Այս առեն հոսանառությունն իր ծայրագույն տատիճանին
հասալ. առուք զոնե կամքը մը աներ այդ աղետքին առաջքն առնե-
լու. Հիմակ արդ ալ կը պակսեր: Խանութին մեջ սրտամորմոք
լրում մը կը տիրեր. առակին ու վրա էր ամեն բան. ալյուրը լուրի-
ացին խանճած, սոխը ձիթապտուղին մեջ ձկված, քաշախը յու-

զին մեջ լեցված, և այս ամենը թանձր փոշիով շաղապատունք չանախորդները միշտ անկյունը նստած կը գտնեին Կումբիկը, պուտիսը կուրծքին կրթնցուցած, աշքերը գետին հառած, հուտահատության արժանը ներկայացնելով՝ իր ներս բաշված կուրծքով ու դուրս ելած կոնակով; Քիչ քիչ հեռացած էին անկից, արդահատիստն զզվանք մը զգալուվ այդ ազտառութենեն ու խեղճութենեն:

Օր մը սեսան որ խանութն ա՛լ շէր բացված, զարկին, ձայն վի կա, ստիպվեցան կատրելու ներս մտան: Խամբուռ պախալը պառկած էր գետինը, հին, բզկոռված անկողնի մը վրա, անշռմէ անշարժ: Աղեխարչ բան էր:

Վեր առին զերծակը և հետո ընկրկեցան ովարզված սեսարտութենեն:

Խամբուռ պախալը երեսի վրա պառկած էր մերկ, և դուրս ցցված կուզին վրու առնելի վերթեր բացված էին:

Բժիշկ մը զազուցին: Սա՞ հետ քննության՝ հառատեկց թե Կումբիկ մեռած էր իր վերթերեն:

Ու բժիշկը կը սխալեր:

Կումբիկ սիրանի ցազեն մեռած էր:

Մ Բ Ց Ո Ւ Մ

(Ժամանակակից բարեկեր)

Կարապետ, իր թագին Ազգ. վարժարանին գրասենյաներուն
վրային իսկ՝ առանցքորս տարեկանին՝ տռավ շահուն Հոռոր, զոր
փողոցին վաճառքըները օրն ի բուն՝ կը տարածեին օդին մեջ
իրենց պոռշտումքներովն ու իրենց ծախած այլողան ազդանքներով:

Սնողինն, որ զեռ կուզեին ուսմունք սովորեցնել իրեն, Կա-
րապետ կարուկ և անդառնալի շեշտով մը ըստավ.

— Էս ուսմունք-մուսմունք յիշտե՛, փարա զաւտրկելու նա-
յինք:

Իր Հավաքած քառոսուն Հիսուն զուռուշովը Հայութակ, ա-
ռեզ, աժաննոց ժանյակ, զերձան, զնդասզ և այն գիելով, ահ-
զալիսրեց փայտե առօդիկի մը մեջ և փողոց թնկավ, սիփեկմին
եղավ:

Առաջին վայրկյաննեն, զեռ այդ մատադ տարիքին մեջ, ուր
Հոգիները չեզ են ու միամիտ, Կարապետ մրցման, ամեն բան
տապալի բանցելու Հողթանակ ուզող մրցման միկրոբին իւայտալը
զգաց իր մեջ: Պոլոս այն թաղերը ընտրեց ժամանագորապետ, ուր
իրեն տարեկից հրեա տղաք տիփեկմիությամբ կը պարապեին: Հանկարծ երևան կլոզ այս սմանցուկ տրհեստակիցին սուր կան-
ցըն ու միան սրտակարկառ ցուուկով զեմքը սարստի աղբեցին
մյուանիրուն: Կարճ ժամանակվան մեջ, Կարապետ, անձանձիր հե-
տապնդությամբ ու սիրալիք ու կեղծապատիր ձևերով անոնց հո-

Հախորդները խլեց՝ աժան մինչև իսկ վնասով ապրանք տալով
Քանի մը ամսվան մեջ տփիկը առսկ եղավ, և տուախ՝ կանակին
զյա բարձված դորրիկ խանութ մը, որ ահուսարսագով լեցուց իր
հրեա արհևստակիցները, որոնք արդեն կամաց կամաց ոտվը-
նին բաշած էին Կարաղետին արշավանքն աշխարհակալված թա-
զերեն, փետուելով շահու նոր ու անկոխ գետիններ, հայ օփենեկ-
ձինս անձանոթ Միամինակ մալով, Կարապետ, մրցման սիրուն
նուսապես իր կրած վնասներուն զրեթց լիուլի լուժեց այս անգամ
իր հաճախորդներն, զար խարեց խարխեց, փուած վարնեց և
հորությունն ինկած առյանքները բշելով անհինա: Ասկին ոսկիին
զյա բարձեց՝ շահու համեն հոտեն հանկուցված գործց ընդարձա-
կեց, ձիով պատցուց իր խանութը, իր շահագործման անմասնե-
րուն մեջ ոչ մեկ մրցակից թույառելով: Իր ծրագրած ու գոր-
ծազրած մրցումին անվրեալ հաջողությունն զիեռովցած:

Որ մը, սակայն, ծազրանք մը, անպատճություն մը, զրկունք
մը իսկ թիեցավ իրեն՝ զրամ շահելու այդ թափառական, ողոր-
մելի ու վերբապես ահմանափակ միշոցը, ու ինքիները ի պիճա-
կի նկատեց նույնիսկ խանութ մը բանալու: Մախեց ձին, անե-
լիքները հավաքեց մինչև համեն սանթիմը, և խանութ մը բացավ
Պոլիս, Մահմատ Փաշա: Օնքերներությունը սթոհաֆեռությանո
վերածեց: Անջուշտ գեռ պատիկ խանութ մըն էր իրը, ժանազանգ
շատ անհշան՝ բաղդամամբ ուրիշ երկու ընտափնեիս խանութնե-
րու, որոնց մին ճիշդ իր քովը, մյուսը զիմացը: Այդ երկու հզոր
մրցակիցներու մեջ անտարեկույս շատ զժզոր ոիտի ըլլար Կա-
րապետի գործը: Ասոնք հետի էին ըլլալե այն հրեա թոկուն վա-
ճապիները զար լեզապտառ փախուցած էր փազոցներն, ա-
նոնց հաճախորդները հափշտակելու համար: Հեշտին հաղթանակ
մը առյած էր այն ատենը, բայց համը բերանն էր մնացած
Մակայն Կարապետ մեծցած էր ա'լ հիմակ, ու մրցման իր դիվա-
լին հանճարն ալ միասին Արքիշ մը՝ այս նոր ասպարեզին ու
մրցավարին զյա պիտի մնաց ձեռնածալ, համեստ ու հանգարան,
հետամուտ՝ օրինավոր շահելու ու զանգազարժ հառաջդիմու-
թյան:

Կարապետի մեջ մրցման ոգին անպին ու անեղ սովորնանք

մը ուներ, խոշոր ամբարտակներու վրայի խուժելու և իհարկին զանոներ կործաներու առակի:

Խանութը բանալին հետո,—դեպք մը որ գրեթե աննշան անցած էր տեսդային առուտութիւն այդ հրապարակին վրա,—Կարապետ իր ամսեղուկ ցաւկովը ողբ միջավայրին ու կացությունը հաստատեց: Հաշազգիսաւության փայլակներով Հղի բիրերովը դիտեց իր պատիկ խանութին ու հանգիւպակաց խանութը: Միակառու ապակին վիթխարի ցուցափեղիներ անոնց առաջարից կը զարդարեն: Ի՞նչ այլազանություն, ի՞նչ ճախություն, ի՞նչ ճաշակ առանձիներու ցուցազրժան ու հարգարժան մեր: Թողոր օրը երկու խանութներն ալ լեցուն էին հաճախորդով. մինչ ինքը բարակ ու փոքրածիր ապակիով ցուցափեղինն ետևն, ակաները սեղմած, նախանձի կայծերով այսուհն առրաջեկ, կը դիտեր զանոնը՝ ջումը կորած, սնգուները ընդլայնված:

— Ա՛յս, եթե իմո ըլլային սա խանութները, կը մոլասր սեղմ տկուններուն մեղքն:

Օրը հոգիվ հինգ վեց հաճախորդ ներս կը մաներ, վարակուու, տեղին խնդություննեն կատկածելով, ու պատիկ գնաւմներու համար:

Թանի մը շաբաթ Կարապետ ճակատը շփեց, քումբերը քերեց, Հեաց, Հառաշեց, մանչեց Հետո, Հանկարծ զվարի, ուրախ, շնչշող եղամ, երգեց, ծխեց, ծիծաղեցավ: Վերիվայր փոխված էր սթուաֆնիք Կարապետ:

Իր երկու արհեստակից խանութպանները, անշուշտ իրենց զօրությամբը ապահովված, բնավ զժգուշ շեղան երբորդ խանութի մը բացումնեն որ ոչ մեկ կերպով կրնար վնասել իրենց կամ իրենց հետ մրցիլ: Հոյ էին անոնք, և երբ տեսան որ իրենց եռբեկ դրացին ալ հայ էր սի՞նչ կըլլա, թող ան ալ վաստկի, հայ չէ մի ըսին ու իրենց գործերով զրագեցան:

Կարապետին հարակից խանութպանը բառասուն տարեկան Հայ մըն էր, ԾՇան Տերտերյան, Գում-Դափուցի Հականասակ մարդ մը, սև խոշոր աշբերով և Հառու ընթիւներով: Միամիտ ու զյուրահավան մարդու ամենեն պերճ աթօպտին էր: Իր ժպտուն զիմքը երբեմն ահավոր խոժոռությամբ մը կը կնճռաւեր: Բարձրաձայն

կը խոսեր և Կարապիտ շատ անգամ կիմանար անոր ձայնը, երբ կը պոռար իր պաշտօնեաներուն ժամանակ մը լուսարձակվեցավ մինչև իսկ բարեկ զայն, անոր զիրքին, նոյն խանութեն ու պատկանելի Հասակեն սահմակած: Բայց առառ մը, անկ շատ խոնարհարար իր տված մենք բարեկին, տեսավ, որ Օհան աղամ ժպանով և մտերմորեն պատասխանեց:

— Ի՞նչ է ան նայինք, բարեկամ, ըստվ, մեզի զբացի՝ եկացրուր տեղացի ես, և այլն:

Կարապիտ ցամազ թե ով էր և ուրտեղացի էր և իր խոսվածքին մեր անանեկ անհամեստություն մը, Հարգանք մը և մինչև իսկ մախկասություն մը զբաց որ Օհան աղամ կամ մեզրցավ զայն, կամ ազերի միջը Համակրցավ անոր:

— Առտուծով գուն այ առաջ կերպառ, մեզի պես խանութպան մը կըլլաս, ըստվ:

Եվ իրու քաշակրտեր տվելցուց.

— Պակաս ապրանք մը, բան մը ունենաւ նե մենե առ, պարուն Կարապիտ:

— Գլխուս զրա, շնորհակալ եմ, պատասխանեց Կարապիտ, ուրախ և գուշ:

Այն օրն եարբ, ընականարար Կարապիտ մշակեց իր Հարարերությունը քովի խանութին հետ Առառ իրիկուն թօնենեան բարությունը քովի խանութին զարար ու մեզը գրու գրու, Խայլամբին մեջ խորագիտ ինքովին և շարժումներուն մեջ արդահասանք Հրամիբրող ձեւ մը:

Իր մրցակցին մեկը սիրաշահած էր Կարապիտ, զրպանը զբարձ էր զայն զրեթե:

Իր մեար մյուսը:

Մյուսը, կայիկ աղա Մորության, զուգագիպությամբ մը ան Գում-Դափուցի, ավելի աարեց էր, ավելի նրբակազմ, բարեձեկ, ազերեկ մորուքով, և ըիշ մը խոճռո նայվածքով: Հայվանար, անոր մերմենալը ավելի գծմար բան մըն էր: Կարապիտ ամիսն մը ի վեր խանութը բացած էր, և Մորության տակալին մինչև անգամ անզիտեալ կը ձեւացներ ճիշդ իր զեծը իրեն մրցակից խահութ մը բացված ըլլալը: Կարապիտ, օրդոն մեջ, երբեմբ

պատրիակներ ստեղծեց այդ խանութին մոռենալու⁴ երբ տերը
դուրս, զրան առջև կը կենար. բայց մարդը չէր տեսներ զինքը:
Սակայն, զիտեց որ շատ անգամ այդ երկու խանութպանները՝
մինույն ժամանակ դոցելով խանութին՝ միատեղ կելլային է եր-
թային: Բարեկամ էին ըստ երնույթին մասերմ ու սիրալիր: Եր-
ճառափին ճրցակցությունը զանոնք թշնամի ընելի Հեռի, կարծես
իրարու մոռեցուցած, մտերմացուցած էր ընդհակառակը:

Արդ, օր մը, Կարապետ իր քովի խանութպանին ըսավ թե
այն իրիկունը ինքն ալ Գում-Գափու պիտի երթար, Հետեապես
իրեն ընկերանար՝ եթե արգելը չէր ըլլար:

— Ի՞ո՞յ, անանեկ է նե, — պատասխանեց Օհան աղու, — այս
իրիկուն քեզի Հետ քանի մը Հատ մնկենք:

Ու պատահեցավ որ զիմացի խանութպանն ալ նույն ժամուն
գոցելով իր խանութը՝ ընկերացավ Կարապետին և Օհանին: Այս
վերջինը ծանոթացուց իրեն նոր արհեստակիցը Խաչիկ աղային,
որ քիչ մը կարծես արհամարհանքով վերաբերվեցավ իր նոր ծա-
նոթին Հետ:

Բայց և այնպես, ետք, կազմելոյին մեզ, օղիի գովայներուն
ազգեցությանը տակ, Խաչիկ աղու ոլ մտերմացավ ից զրացի
խանութպանին Հետ և սիրալիր ու բարյացակամ՝ եղավ անոր
Նկատմամբ:

Օղիի սեղանին առջև, Կարապետ տեսավ թե իր զրացի Օհան
աղան որբան ոյսուրաբրոր, բուռն և անմտած մարդ մըն էր,
Խաչիկ աղա նույնքան հանդարտ և պատրյուն, քիչ խոռոշ և
խուռուն անձ մը: Նկարագիրներու այդ Հակիմնդիմությունը ուրա-
խությամբ լեցուց Կարապետը: Անկեց ետքը քանիցու այդպես
Գում-Գափու երթարու պատրզակին տակ, Կարապետ ընկերացավ
Երկու թոշաբնիներուն և մտավ անոնց մտերմությանը մեզ: Իմա-
ցավ խուզ Հրճվանքով, թե որքան որ ալ Օհան և Խաչիկ բարեկամ
էին՝ իրենց խանութներուն մերձավորության բերմամբը, զիրար
շատ չէին սիրեր. Նախ իրենց Հակոտնյա նկարազրին և Հետո
ընաանեկան էին ու անմոռանալի խնդրո մը պատճառվէ: Իրենց
Ֆիտասարդությանը, Օհան և Խաչիկ մինույն աղբան պար-
նըզած էին: Ասկեց բախում մը, որմէն Խաչիկ ազելի նուրբ և ա-

վելի խորամանկ, հազբող ելած էթ և տղթկանց հետ ամուսնացած: Յհան թեև մոռեալ ցուցուցած էթ այս հարվածը, երբեմն անոր ցավը կը զգար իր հոգիին մեջ հակառակ ինքն ալ ամուսնացած ու զագակներու տեր եղած ըլլալուն: Կարապետ դիտեց նոր որ հաշիկ միշտ հեգնուկան շեշտ մը ոմեր Յհանին հետ որ առկից շափողանց նեղանալը ակներկ ցույց կուտար:

Մրցման մարտագալտին վրա ազգմական ժրադրի մը հարդարժամմը ու գործողությամբը զբազելով հանդիրձ Կարապետ շանաց իր գործը զարգացնել: Իր գրացիին բարի հօժարութենեն օգովելով, անոր երաշխավորությամբը ապրանք վերցուց, առաջկը ճախացուց, համախորզը շատցուց:

Բայց այդ հառաջադիմությունը զինքը, իր անկուչու ախորժակը գոհացնելն շատ հետի էր:

Օրվան մեր քանի քանի անգամներ, աշքերը ըղձանքի՝ կայծերով բանկած, իր հարուստ դրացիներուն ցուցափեզեկերը կը զըներ, առ' ու որվոնք իմ ըլլային մոլուալվ:

Պալամինն, ուր կը բնակիր, Կարապետ Դում-Գափու փախազըրկեցավ, տեղզույն վրա կարենալ գործելու Համար:

Այդ միջոցներուն Դում-Գափու թաղային ինեղիր մը ծագեցավ: Երկու հակամարտեկ կուսակցություններ բուռն պայքար մը մզեցին երկու խումբ ընտրմիներու շուրջ՝ նոր Բաղ, Խորհուրդի մը կազմության համար: Յհան և ետշիկ հակառակորդ կուսակցությանց մեջ գտնվեցան: Կաշիկ աղա իր մեկ հարուստ և աղդեցիկ տղառկանը կուզեր թաղական ընտրել տալ: Յհան կը հակառակներ ատոր, Բայց ետշիկ աղայի կուսակցությունը, ավելի գորավոր, տարած հազբանակը: Կարապետ ալ պայքարին մեջ դեր մը խաղաց, ձեռքի տակն ուժ տալով ետշիկ աղայի ընտրելիին Հաքոզաւթյանը:

Ընարտկուն հանձնաժողովներուն միջոցին, Դում-Գափուի գետնատան մեջ, ուր սովորաբար կը Հազարվելին իրիկունները շուկացիք, տոք վիճաբանություններ կատարվեցան, մինչև իսկ իրիկուն մը Յհան և ետշիկ, պլուսնին տարցած, զիրար բարձրաձայն նախառնեցին:

Ասիկար բարեգեպ առիթ մը եղավ որ Կարապետ, մտերմական

խոսակցության մը միջոցին, Օհան աղային ականչին բաներ մը փսփռոց և աշխիկ աղայի մասին։ Իրը թէ այս վերջինը ըստ կը լլա Կարապետի թէ՝ շատ լը մասքման Օհանի հետ, որովհետև կատկածելի և վտանգավոր մարդ մըն է ան։

— Ես վտանգավոր մարդ եմ մի՛, որուաց Օհան աղա կատակութենեն փրփրելով։

Եվ ահազին ձեռքը սեղանին դարձավ շիշեր ու գավաթներ տապալելով։

— Զավակներուդ վրա կերդնո՞ւ որ ինեւ իմացած ըլլալդ շնայտնես, բուզ ուրիշ իրիկուն մը Կարապետ՝ Օհան աղային։

— Կերդնում։

— Աղեկ, եռաշիկ աղա երեկ ինձի բառվ քեզի համար թե պիտի սնանկանա մոռերս, և թե գործերդ շատ գեշ վիճակի մեջ են…

Օհան աղային գեմքը կառ-կարմիր էղավ. Բայց հոնքերուն տակ աշվաները արյունով լեցվեցան, կուրծքը աշեղարին ունեցավ և բաները զորս ուզեց արտասանել կոկորդին մեջ խեղդվեցան։ Քանի մը բռնի ֆշաց միայն Կարապետ անձկությամբ զիտեց իր զոհին այս այլակերպությունները։ Եվ շարունակեց։

— Կրտաեց ալ զիս որ այլնս գործի հարաբերություն չունենամ քեզի հետ։

Այս անգամ Օհան աղային այսերց զայկահար գոմատվեցան, և մեկ քանի անհաջող կազիկանձյուններ ելան կոկորդին։

— Թայց ես կարեւորություն անգամ չեմ ուռ անոր խօսքերուն, վերջացուց Կարապետ՝ գոհունակությամբ խմելով իր օդին։

Մեր թոհաֆնին ինամքը ունեցավ նաև նույնիմաստ վերադրումներ ընելու Օհան աղային եռաշիկ աղայի մաս, այս վերջինին զապած կատաղության զիմաշարժությունները լրանելով անոր ընդհանրապես խաղաղ ու անվրդով գեմքին վրա։

Եսու շանցած, երկու վազեմի արհեստակիցներ, իրենց միջեւ ծագուծ թշնամության մասին առանց բառ մը փոխանակելու, խղզեցան, և իրար հետ ըրացի աստես։ բարինը գաղթեցուցին բոլորովին

Իր խանութին ցուցափեղին եաւ ապաստանած, Կարապետ

Հրմվանքով իր ձեռքերը կը շփշփեր՝ զիտելով երկու խանութպահ-ներուն առաջարկությամբ ու վրեժինքությամբ վառված ակնարկները՝ իրարու գեմ արձակված Ու իր ամենօրյա հանկերգը շրթներուն վրա էր.

— Ա՞յս, առ խանութները իմա ըլլային:

Զարմանալի դյուրաթերությամբ մը, Կարազեա՝ զիրար այլ-և շահու չափ առազ այդ երկու մարդոց հետ ալ իր հարաբե-րությունները կը պահպաներ կը մշակեր, սիրալիր ու մտերմա-կան, առանց ասոր համար անոնցմն այպահնվելու. նույիիսկ կար-ժնս թե տեսնց լսելուայի հոժարամիտ հավանությամբը, որովհետև անոնց միակ կապը ինցն էր այնունետե, և որպեսզի այդ կապին շերտիվ անոնք հրաշընին իրենց փոխադարձ առելությունը և անոր միջոցով կարենային նախատել և գրգռել զիրարու Կարա-զեա, հետևապիս անհրաժեշտություն մը դարձավ այդ մարդոց համար: Հետո, իր երեսութական անշահախնդրությունը երկութին համար այ արեին պես պայմառ էր: Մինչև անգամ այդ անմեղը իրենց ատելության և թշնամության մեկ դուռ կը նկատեին, և ասիկա կերպով մը փոխարինելու համար երկութին ալ կը բա-նույին օգտակար ըլլալ անոր՝ այժմ ապրանքներ տարով, փոխար-գություններ ընելով, իրենց առնենքն իսկ առնենք, երկիկողմանի զրպարտությանց համար—զորս նենգամիտ թուաֆճին խնամքը ունեցավ հետզհան դարբնելու և արժարժելու—անոր առն շա-նալով ինքնինքին չըմեզացնել: Կարապեա՝ Մորուրյան և Տերտեր-յան ընտանիքներուն բարեկամը եղավ հավատարապես, սիրվելով և մեղքվելով, պաշտպանվելով և նպաստավորվելով անոնցմի: Մանավանդ Նրբամտությունը ունեցավ անոնցմն յուրաքանչյուրին ներշնչելու այն հավատքը թե ինք՝ իսկապես և անկեղծորեն մի-միայն իր բարեկամն էր, և մյուսին՝ շահու համար միայն կապված:

Երկու խանութպահներուն այս խուզ և անագորույն պայքարին միջոցին Կարապեա լեցուց իր խանութը ապրանքով, այլազան և արժեքավոր, և հաճախորդները շատցուց: Մանավանդ որ անզին կափքը, թե անազմուկ սատկագույն աստիճանի մը հասավ: Խաշիկ աղաւ, հակառակ իր բնածին պաղարյունությանը, իր իւա-

հութին զրան առքել կեցած, շատ նշանակալից ու ամբարտավան և մարտահրավեր կերպով պեխերը կոլորտեր, աշքերը իր հակառակորդին խանութին հառած գաճանորեն։ Անոր այս զրդոի ընթացքը շատ դպավ Օհան աղային, որ արդեն զյուրագրդիո, իր կողմեն նույնքան անրարհավաճ եղանակով մը հակակշալու համար մյուսինը, իր խոչը հաստկովը, ձեռքերը ետին կապտժ, վեր զար պատեցավ խանութին առջեց, հաճախորդ, տուտուր, և այլն մոռցած, և ամբողջ մարմնովը տենգային մալեկնությունն մը զյուրդված։

Կարապետին մեկ նոր և արյունալի բանսարկությունը զեպ-քերը գտնամիմեցին։

Գիշեր մը, միշտ օդիի սեղանին առջ, երգումի սովորական բանաձեռ կատարելի հետո, իբր թե զմարթությունը և ակամա, Կարապետ հայտնեց եաշիկ աղային։

— Օհան աղան կըսի որ թերեզա հանըմը ձեր կինը ըլլալե առաջ իրեն հետ ամեն բան ըրեց լմնցուցեր է... բայց ես բնականարդր շնավատացի։

Եթե զիսդվածով Օհան աղան նույն տեղը գտնվեր, անջուշո ոմքը մը հագանական էր։ Հեր եաշիկ աղա իր ընտանեկան պատմույն տրված այդ ամենի հարգածին տակ շյուրուած՝ դանդաշելին առն զեաց։ Հետեւյալ օրը, եթե ըլլալը Օհան աղայի պարթի հասակը և ֆիզիկական բացահայտ ուժը, եաշիկ աղա ապահովապես հարձակված էր անոր վրա։ Բայց իսկույն, Կարապետ անոր ընծայեց նյութական վրիժառության մը զյուրին միջոցը։

Օհան աղայի շահու զլխավոր տղբյուրերին մեկն էր մազի ներկ մը, որ մեծ բանակությամբ կը սպառեր, և որ կըսեին, անոր զործին ընդարձակվելուն զլխավոր պատճառն էր եղած։ Արդ, Կարապետ հաջողեցավ գտնել հրեա մը, որ գաղտնիքը ունեց մազ ներկելու զուրի մը, տեսակին մեջ տուաշնակարգ, և որ հավանեցավ կլորիկ գումարի մի փոխարեն Կարապետին հանձնել այդ զաղանիքը։ Առով զինված, Կարապետ եաշիկ աղային մոտեցավ։ Նախ, իբրեւ հատուկ նրբամառությունը մը, անոր մեջ հրահրեց բիեախնդրության հնոցը՝ զոր ատրին մը ի վեր պատրաստելու վրա էր, և հետ իր ներկին խնդիքը պարզեց։

բացատրեց որ եթե այդ ներկը իր խանութին մեջ շատ տժանգինվ ժամաներ, Օհան ազային ներկը կիյնար, կը լմնեար: Առախության շեկ փայլեր չողացին հայիկ աղայի աշվատերուն մեջ, այդ երանելի ներկը իր թշնամին վճացումն էր:

— Եինք, բե՛ր՝ ծախոննք, ըսավ, ի՞նչ են պայմաններդ:

Հաս՝ Կարապետ ճակատը շփշփեց վարանմամբ: Պայմանները:

— Պայմաններս չառ ալ թեթև չեն, ըսավ ժպտալով:

— Ինչ որ ալ քլան, առաջվոնն ընդունած եմ, որտասխանեց եալիկ աղա, ձեռքը թոհաֆնին երկեցնելով ի նշան հավանության:

— Գետք է որ մեր երկու խախովները միացնենք և ընկեր ըլլանք, ըստով Կարապետ կը ուղարկուի և խոլ ձայնով մը, ներքին զողված Հուղումն մը թրթուն:

— Ընկե՛ր, կրկնեց եալիկ աղա, ճակատին քրախնը սրբելով մատեներովը:

— Այս՝ ընկեր, արծոգանքեց անապորույն խանութպանը:

Նարանի մը ետքը եալիկ Մորուքյան և ընկ. Ֆիրմայով մազի ներկ մը Հրապարակ ելավ, տուփը տուր զրուցի, մինչ Օհան Տերաներյանի ներկը բան զրուց կարժեց: Օհան աղա ափ ի բերան եղավ:

— Վա՛յ, թշգառական սրիկա, պոռաց, տունս տեղս պիտի կործանե, ուր նայե...

Եալիկ-Կարապետ՝ ընկերությունը երկուքին մեջ գաղտնիք էր միայն: Բայց շատ շանցած Կարապետ իր խանութը նոխացուց՝ աշագին ապրանք բերելով և նոյնիսկ երկու պաշտոնյա վարձեւով: Եանութին ճակատը ընդարձակեց, խոչը և Հոյակազ ցուցափեղիով մը որ վար չէր մնար հիմակ իր մը քաշակից ցուցափեղիկրեն: Ներկը աշագին ընդունելություն գտավ. անոր պատճառով Կարապետ զերակշիռ զիրքի մը տիրացավ Մորուքյան վաճառառան մեջ, իր աղդեցությանը տակ նզմելով Հեք եալիկ աղան, որուն կյանքը բարոյապես փնացած էր, անմարելի վրժառության կրակներուն մեջ անգագար ձեռներված:

Նոր ներկին Հրապարակ ելլելն և մհծաքանակ վաչառաման

մը արժանալին Հետո հասկցվեցավ որ Տերտերյանին գործը իր ներկին հաջողությունը հետ կապված էր: Մը ցման շգիմանալով՝ ինկազ ան, ու եկազ վայրկյան մը ուր Տերտերյան ներկը բոլորովին գաղրեցավ գանուզին: Օհան ազա կը մանչեր. կը դառնար վաճառառանց մեջ, կը հայնոյեր, կը քֆրեր թիւապարտի մը պես, բայց սահզեված նոր կացության գարման մը չէր գտնար: Դիւած էր որ խանութին առցի իր ցուցադրած հոխորտանիները աղայական շարժուձևներ էին, անօգուտ և ծիծաղելի: Դործը սկսած էր վտանգվիլ, մանազանց հորմնհետք բովի աննշան խանութին ալ տնտեկնեալ փայլ ու հոխություն ստացած էր: Կարապետ այլես առաջվան պես քծնական ձևներ չուներ իր գրացի խանութպանին հետ. մենադղայական էր անոր պես և տեկեց ալ ավելի: Վերջին ժամանակներս իր կրած բուռն հուզումները, բարեկություններն ու կատաղության առգնապները շատ բան պականցուցած էին Օհան աղային խրոխտ առնականություննեն: Սոսկմամբ զիտեց որ դործը վատնգավոր ուղղության մը մեջ էր, և որովհետ տակառին վստահությամ ուներ Կարապետի վրա, իր սուբրարո բացար անոր:

— Վիճակս ազնի չէ, Կարապետ, ողլում, բամի, սա զիմացի խայրառակին ներկը խերս անիժեց. ասանկ երթա նե լմեցած էմ. Հոր մը զիտե՞ս:

— Առր, նար, նար, մրմռաց ձեննդավորը, և մեկնն ի մեկ.

— Օհան ազա, ըսամ, կուզե՞ս որ քեզի փրկեմ: Ընկեր ըլլանք, կը փրկվիս:

— Ընկե՞ր, կմկմաց հեք մարդը՝ խոլոր-մոլոր Կարապետին նայելով:

— Այս, ընկե՞ր, արձագանքեց բանսարկում:

Երկու որ եռքը պայմանագրություն մը կնքվեցավ; որուն Համեմատ Կարապետ Սանդուռնան՝ Օհան Տերտերյանի գործին ընկեր կըլլար, և փռխաղարձարար:

Այսպես, Խաչիկ աղային եարը, Օհան աղան ալ ազին մեջ առազ Կարապետ. ու ա՛շ անկեց եռքը բետք հոգը լըրով որ անոնք կրնան հասկեալ թե երկու թշնամիներուն ալ գործին ընկեր է ինքը, վտանգի նյութական և բարոյական անանկ դիրքի մը

Հաստէ էր որ բանե մը քաշվելու պետք շռներ։ Արձակ համարձակ, վարեց երեք խանութիներն այս Արդեն, բանի մը ամիս եացը, Ծհան ազա ահենապես անանկ ծանրաժանը պարաբերու տակ ընկանված էր որ, Կարապետ երկու հարյուր ոսկի գրավ առ ափը և զուրս ըրավ, Գալով Խաչիկ աղայի, անոր գործը ավելի դյուրին եղավ լմնցնել։ Մպառնացավ ներկը շոյառուստել և ուրիշի մը փոխանցել անոր իրավունքը՝ եթէ շնաւաներ թողով խանութը երկու երեք ոսկիի փոխարեն։ Խաչիկ աղան փարան տռավ և կորագլուխ գուրս հրավ։

Այս գործազության հետեւայ առողջամ, Կարապետ, Գալաթցի երրեմնի աննշան չիքերնինս, եկավ կեցավ Մահմուտ Փաշա փողցին մելոտեղը, և զարդը նայեցավ. Թոհաֆճի երկու փառավոր վաճառառառները, որոնք իր ազգաւոր իշխաննի հոգին տանեսոր այնքան արցանած էին նախանձի և Հաջողնիքի գելանեներուն տակ, առա իրն էին. ինքը կը տիրապետեր Հիմար երեք վաճառառանց մեջ՝ շնորհիվ մրցումին, անարդ ու եղեգնական մրցումին։

— Ո՞յս, Հառաչեց, իմս եև տառեր... ու Հիմակ ա՛յ ապրինք... իրրե պատվավոր մարդ։

Իրավ ալ, Թոհաֆճի Կայրապետը կարեռ և պատվավոր մարդ է Հիմակ. ոիր գործին զավակն է, կրան, և 30000 ոսկիի տեր, Ազգը տնով կը պարժենա, ու մարդկությունը... նմանապետ,

Վ Բ Ե Ժ Ը

Ամառնավերջի լուսափայլ այդ գիշերը, Մետիին^{*)} հաստարեստ ու պատկառելի կռնքը կը պատռեր Մէ ծավին լահը, ցոււկովը խռովնելով ու խռովելով ջարերուն խազաղաղիս մակերեսը՝ խռովիլու Համար կարծես նիբո՞ր երկինքն իշած զմայլելի ժիր կաթինին. Հյուսիսն՝ անժանոթին անհեղի արաւածությունը կը փակեր ամեն բան, մութի, անդունդի, անսահմանության խռովաշփոթ ու ահեղ բռղին տակ, դոզ տալով տկար ու զզայնոա հոգիներու. Հարազեն՝ ասիական ափունքին անորոշ, ոտզերազժային երիզը կը չզթայզեր անհունորին՝ հեռուատին մեջ անզգայտար թանձրացող մշուշին բողարկված. Տիեզերքին վրա ծանրացող լուսիոնը ինծի կը թվեր արդ բռպեին աղելի ահարկու բան մը բան մեծամոռնչ և ահարեազզորդ ուրականները, որոնց անսած էի դիվայնացնելը այդ պատմական ժավու. Ու այդ լուսիոնն այնքան ձնչիլ էր, ու այդ խռովազությունը այնքան հափշակոզ, որ մերթ կը թնած զերեահարկին ժավահայաց երկաթյա բարամբին, աշքերս ժավահույզ, տեսակ մը անզրաշխարհիկ թավալման ցնորսին մեջ, չէի իսկ լսեր նավուն ցնդերքներուն համաշափ շոփեցը ու խռով ու թրթռացող գզրոյունը որով Մետին կը սուրար շարունակ:

Վարը, Հառարսկ մահկանացուներու մակարառեղիին մեջ, կուրժքեր կը ֆշային համաշտիությամբ ու երբեմն՝ բրդական լեռնարուրը ու ասիաշունչ երդի մը լալազին բեկորը կերկնեար

*) Մետի շոգենավի անունը.

խաղաղության մեջ: Մեկ քաեր զայգեր, վերի երջանիկներն, արու և էզ, պիերի ու ինքնամուսոր փառումով, չու հոն, լուս ու մոնշ կը զիտանին բնության մեծավայելլությունը, ու կը փսփառ- լին երբեմն ու կը սիրվածին մերթ: Ու ես ձնացած թե ո՛ւր եմ, զեսի ո՛ւր կուղղմիմ, ի՞նչ ձգած էի ետիս, չէի մասեն, չէի զգար, կարծես մեկ խացած մասնիկը զա հեռվի թանձրակու մշուշին, ուր կանչնուանար, կանելութանար տարտամ երիզը ասիական ափնակառուց լինեաշարին: Աիթխարի և անըմբը- նելի բաներու մտացնորդով ալեկու, կը մոռնայի ցորվն ալ, հույզն ալ, խնծիղն ալ, վայելքն ալ կյանքին, քաղցրությանը մեծ ու մարդկային նպատակներու տեսնդայից հետապնդումին, և էությունս աննպատակ ու անզգալի հեշտությամբ, կը թաղվէր, կը լվացվեր սրսփայից՝ սպիտակաշող ու ծիծծիուն ժիր կաթի- նին մեջ զոր օգոստոսի այդ անապակ լսանկան կը թափեր ծովուն վրա:

Մեկն, սակայն, հառաջանք մը սթուփեցուց զիս: Թարձա ու տեսա, ինե քանի մը բայց անդին, բարամբին վրա կքած, մարդ մը որ կը խոկա՞ ծովուն նայելով, անթարթ ու անշ որժ Անեթօն ցավագին թիկցավ ինծի այց հառուր, մարդկային զշտի անանկ մեծաբարբառ Հայաստարության մը կարգացի անոր մեջ որ խանդուտալից հետարբըրությունն մը մզված, թիշ մը մոռն- ցա, ազելի ազիկ տեսնելու Համար մարդը: Եզ յուսի անորուց հառագոյններուն մեջ Հանցա ճամբորդ մը, որուն առաջին զայրկյանին իսկ՝ երեսիցն ու շարժումները խորհրդավոր ու ցավագին թիված էին ինծի: Հայ էր անշուշա, բայց ոչ մեկուն հետ կը անենքեր, ցերեկին ծալլապատիկ նստած էր խելաց կող- մը, շուրջի շարժումն ու ազմուկին անուշողիր: Ամերիկային զերապարձողներու խոմբին կը պատկաներ: Բայց ոչ ոք հետը կը խոսեր: Անպարազրելի տիսրության մը խորիմաստ զրոյ մը կոտ գեմքին վրա, մեռելական գուեաթափությամբ: Այդ սրտու- չմլիկ ախրության առին անզիմազրելի պետք մը կը զգայիր իրեն զիտելու և ըսելու: «Բարեկա՞մ, ի՞նչ է վիշտդ, արդյոք կըր- իա՞մ սփռմին քնզ: բան, թեթեցիր, զուց նար մը կա...»: Հուսնին աժգույն թուրը ինծի կը ցուցներ հիմակ իր կիսագեմքը,

կիսախուսի աշքը՝ խոր թաղված, իր զեմքին գիծերը՝ ազերած ու մաշած: Աւ երբ քուզդի լալագին ու կերպեր ավաշը նորեն բարձրացավ վերեն, մարդը խորաթամբ հառաջ մըն ալ արձակեց: Աւ տեսա արցունքի կաթիլ մը որ պահ մը ցոլաց անոր այտին մյուս ու ինկավ ծովք:

— Բարեկա՞մ, ըսի, ձեւքա ուսին զնելով, ինչո՞ւ կուտք... Հայրենիքի կարո՞ւն է արգյուր...

Մարդը մեկնեն ի մեկ շակվեցավ ու տեսա որ աճապտրոնք թիկնոցին մեջ զրապանը պահնց թօւպթ մը զոր ձեռքին մեջ ուներ:

— Հայրենիքի կարո՞ւն, օ՛, անշուշա կա ատիկա, ըստվ նըշ վաղած ու արտմայի ձայնով... բայց իմ ցավս ադ չէ միայն... իմ ցավու անժարենի է... և ազնւորդ է զիս մխիթարել փարձել:

— Ուսկի՞ց կուգաք:

— Ամերիկային. Հազիվ երկու տարի է երթալս... զործ ունեի Հռն. բավական զրամ կը շահնիի, բայց աճապտրանիքով նա կը զառնամ... որովհետեւ...

Չշարունակեց, ու զրոխը ինկավ կուրերին մյուս ու աշքերը նայեցան ծովուն: Հինգ վայրկյուն մնաց այդպիս, կարծես բարձրացած: Սպասուցի որ շարունակել:

— Որովհետեւ, Հարնց զրոխը վեր առնելով—կնոջս մահվան բուրք տաի...

— Մեռա՞վ կինը, Հարցուցի վշտակցության մը պես, մեքենարար:

— Մեռա՞վ—կրկնեց ինքնիքնը իռուելու պես մթության նայելով—ո՛չ, չմեռուզ պարոն, մեղուցիին...

Աւ այս վերջին բառը արտասանելեցավ ոչ թե արամությամբ, այլ կատաղությամբ մը, որմէ իր ամրուզ մարմինը գողաց:

— Այո՛, բարեկամս, շարունակեց, երկու ձեռքերով վանդակաձողը բանած ամրութեն ու միշտ աշքերը մութ անցրապետին հառած, այո՛, մեղուցին խեղճ կինս, սիրական կինս, բաղցը և զմայլելի կինս... մեղուցին, սրիկանները...

Այս անդամ երկու բռունցքները վեր տուավ, ողին մեջ երերուց, ու լսեցի ականերուն քստմնելի կրճատութը:

Բոլոր այս խոսքերում և շարժումներում տակ կռահեցի ընտանեկան տռամ մը, անշուշաց ցավագին բայց հետաքրքրաշարժ ալ: Մակայն խոսակիցս այնքան զզայնացած, այնքան վրդովված էր որ չէի համարձակվիր այդ տռամին մահրամասնությունները հարցնել իրեն: Մեաց որ, խոսելու եղանակին, գործածուժ բառերն կը հասկցվեր թե տգետ մեկը չէր, արտահայտվելու մաքուր և պատկերայից ձեւ մը ուներ, բնչ որ տգելի շահեկան կը դարձներ զինքը իմ աշխիս և իր վիշտը ավելի ողբերգական կը ընծայեր ինձի:

— Ամիսների ի մեր խազաղ քուն մը շեմ քեած, շարունակեց կուրծքը հանաչալից, մզված անշուշաց պոպթկալու այն անդիմադրելի պետքն զոր բուն ցավերեւ առասպոզները կը զգան, պոցեց ոչ թե թեթևալու, այլ իրենց կալիծը արձարձելու, բոցավառելու համար: Այս՝ բուն վրդովված է, կահոնեավոր անոնդ շեմ առներ, և կնորս ուրագականը կը առնջի զիս... կյանք չէ իմս, զժոխք է... բայց անշուշաց վախճանը կա այս անտանելիի վիճակուխը է... երբ զյուղս վերագառնամ զիս շաբախի նաեւնան, ամելի ուզեկ: Ֆառագելու պետք շափառի ունենամ մընթ լուսենու համար:

Եվ գայրկյան մը լուսի հետո՝

— Բայց զուր ո՞վ եք, կրնա՞մ Հանշեալ, հարցուց հանկարծ անվոտահության զգացումով մը թերեւ լիցված:

Ըսի թե ո՞վ եմ, և ո՞ւր կերթամ, ի՞նչ ընելու համար: Իսկույթ, տեսակ մը հառագայթումով ձեռքն ինձի երկարեց:

— Ուրախ եմ, ըստվ, զմեղ հանշեալուս: արդեն ծանոթ էիր ինձի... ձեր զրվածքներով:

Եվ գոհունակության հառաջանքով մը՝

— Հիմա, շարունակեց, մտիկ ըրեք զիս՝ ունենելու համար թե բնչ հրեշտություններ կան աշխարհիս վրա, ամենն հեռավոր դյուզերուն մեջ իսկ:

«Ես եարքերդի ք... գյուղեն եմ. Մեզրեի կեղրունականը ասի ուսումս, և զրաշնավարս ըլլալի հետո ուսուցչության ըրի մեր գյուղի վարժարանը: Այդ միջոցին նաեւնաց այն աղջիկը որ ետքն կինո եզրվ: Անիկա շատ գեղեցիկ չէր: բայց ամբողջությամբ շնորհի էր: Եփատ կուենի մեջ կը ված՝ մեր գյուղի

օրիորդներուն առաջինն էր իր զարգացումովը, Համեստությամբը և պարկեշտությամբը: Ամենուն աշխը անոր վրա էր. իր ծնողը պյուղին էն Հարուսան էին, ինչ ոք անշուշտ մնադույն հրապարային էր զինքը առնել աղողիներուն աշքին...: Բայց ինք ոչ մեկուն կարևորություն կուտար: Իր քույրը ամուսնացած էր իմ զպրոցակից ընկերուս և ամեննեն մտերիմ բարեկամիս հետ, որ աղքատ բարյ գործունյատ ըլլալով հաջողած էր զիյան Հանել այդ Հարուսա աղջիկը:

Ծնողը պարտավորված էին տալ իրենց աղջիկը այդ մարդուն: Անգամ մը այդ տուննեն ներս մտնելու պես՝ բարեկամն, որ իր մեջ զեղ ու չար բնազդներ ուներ եղեր ծածկված, տիրապետական կը զանուա և ամեները իր քժո՞ւաճույքներուն ծառակ կը զարձնե: Իր քննին՝ բնականարար շեր կրնար Համակրիլ այդ բիրու ու կոչտ ժարգուն, որ ամեն առիթիվ վիրավորանքներ կը հասցներ խեղճ աղջկան, որուն հետ արգին ոկասած էի Համակրական Հարաբերություններ ունենոլ: Հաւա շանցած երեսն ելավ մեր Հարաբերությունը և բարեկամն, որ այնքան սիրայիր էր միշտ հետո, Հայտնապես թշնամություն ոկասավ ինձի զեմ...: Եվ Հասկնարդ որ զիտավորությունն էր ամուսնալու իր քննին հետ, ամեն ստորեւմյանց զիմեց արգիլերու Համար այդ բանը...:

Խոսակիցս կանգ առավ. զիշերվան կիսալույսին մեջ աշքերը շողացին շեկ լսայսերով. ու տեսա որ զեմքին զիժերը կը պրկվիին կը կծկվիին՝ բատմնելի՛ ըլլալու շափէ իր զիակային մաշվածության մեջ մոլեգության այդ Հարուցը աշտրկու կը զարձներ զայն, և չարցած կոկորդը թրշելու Համար թուք կուլ կուտար դժեգով ճը:

— Բայց մեր խռատումը զերծնական, մեր գաշինքը անգառնայի էր, շարունակեց մարդը: Նշունածս ինձի կը հազորդեր նողկաները և տակւությունը զոր կը զզար իր բնաւյրին Հանգեպ, և անհամերեր էր զրւու ելլալու այդ տուննեն՝ ամուսնալով ինձի հետ...: Ծնողը բնականարար հեթարկված իրենց բնավոր փեսին՝ Համամեր էին անոր հետ՝ աղջիկն ինձի շտալու բայց նշանածիս անհողդողդ կամքը Հաղթեց ամենուն. և մենք ամուսնա-

շանք...: ՄՇՀ, երգանիկ մեկ տարին որ միասին ապրեցանք մեր տանը մեջ, ո՞չ, ոյզ երանելի ու անդաշնայի օրերը. երա՞զ էր տափեատ...: Մեկ տարի՝ երջանիկ... եզ անկե ետքը, ու հիմա մանավանդ, կյանքա գժոխք է, պարոն, զժո՞խք, հեծեց խեղճ մարդը ամբողջ մարմնով գողգղալով...:

Մետին կը սահեր խազաղ՝ ինչպես միթախը շմուշի սառնեզն Հայումապակիի մը վրա. Հեռուն, ափունքին մոտ, փարսոր մը հառագալիթ կը շոզար՝ երկար ու միօրինակ քթթումներով. և քրդական ավաշը մերթ նվազկոտ կը բարձրանար՝ բունեն կարծես այլուս Հայոցահարզած. և կամրջակին վրա սիրվող սիլութիները անհայտ կը լուսային կամտցուկ մը՝ գտխշելով թեթև զովեն որ սկսած էր ուկոյտերս սարսացնել: Ու այդ տարարախոտ մարդուն եղելի կոժը արծուկված այդ զյութական անգորդին մեջ՝ ավանդութեալացին ազագակ մը կը թվեր ինձի...

— Այս, պարսն, երգանիկ եղանք, ես ու կինս, որուն հոգին ամբողջ ազնվությունը, նկարագրին բռվանդակ բարձրությունը Հաստատեցի ոյզ ամենօրյա մտերմության մեջ, ու մեկ տարի Հետո Հիմարաբար կը սիրեի զիները...: Ու ոչինչ կընար Համոզել մեզ թե երջանկությունը տեսեան չպիտի ըլլար, քանի որ մեկուսի կապրենեք, ամեն Հարաբերություն խզած, նույնիսկ աներազ տանը Հետո...: Բայց, ապրիլ կուզեր. մեր խնայողությունները հուտենելու վրա էին. մատավոր ապագանիս վարդագույն չեր...: Այր ու կին խորհնեցանք երկարորդն, և վերշապես, թեև ատիկա զմնդակ քան մը ըլլար երկուքին ալ համար, որոշեցինք որ ևս Ամերիկյան երթամ զբան չաշելու, քանի մը տարվան Համար, Հետո Հագարքված գրամով գործ մը սանդեմ ես ինձի, որպեսզի կինս երջանիկ ըլլա և ոչ մեկեն կախում ունենանք: Մեկ գժվարություն մը կար. կինս ո՞ւր պիտի մեռը բացակայությունն միջոցին, ատիկա երկուքին Համար ալ մեծ մտատներուն եղավ. վեր գարձուցինք, վար գարձուցինք և չիրցանք որոշման մը Հանդիլ, երբ այդ օրերը զորանշա մեզի եկավ, իմացած ըլլալով մեկնում, Համակրություն ցույց տված և Հայտարարեց որ իմ բացակայության՝ ազդիկը առանձին չեր թողուր, իրենց առունք կտռենք, մինչև իմ վերադարձաւ Հետելյալ օրը, կնօզո քե-

ռայրը, իմ բարեկամս նկավ միևնույն փափաքը հայտնել, սիրա-
լիք ու համոզիչ ձեռքով ապահովցնելով զիս թե մեծ խնամք և
Հոգածություն պիտի ցույց տրվեր կնորս հանգեց:

— Կը մատենք, ըստեր իրենց:

Բայց կինս բնազգաբար, տեսակ մը հախազգուշացումով՝
կը գժկամակեր համաձայնիլ այս հրագերին. չէր կրնար որոշակի
ըսել թե ինչ բանն կը վախնար իր ծնողաց տան մեջ. գիտավա-
րապես մասնակոր նողկանք մը կը զգար իր քեռայրին նկատ-
մամբ. միշտ տեսակ մը երկյուղ ունեցած էր անկե՞ առանց
հայտնի պատճառի, այնպես, բնազգաբար:

Հետո դուրսը, առանձինն նորնն զիս բռնելով, քենեկալո
փարձեց համոզել զիս:

— Չու բարեկամիդ չե՞ս զսաւահիք, ըստեր, բացակայությանը
միջոցին կինդ ո՞ւր կրնու մնալ՝ եթե ոչ իր ծնողաց տանը, որ
ամեն տեսակետով ապահովագույն տեղն է:

Հարկը օրինըց լուծեց, և ես իր ծնողաց տունը թողնելով
Հոգեհատուց՝ գացի Ամերիկա, տրված ապահովություններին
սիրառ բաժական հանգստացած....

Խոսուկիցու այս վերցին բառերը արտասահեց այնքան նվա-
զուն շեշտով, անանկ հուսահատական միջոց, մը որ կարծեցի թե
պիտի նվազեր. երկու ձեռքովով բանեց երկաթյա ձողը, զրելի փա-
թթվեցավ անոր՝ վար լինալու համար. և կը ետքեր ակնառուի՛,
հեռուն՝ ամպարազիծ տարածության որ խավարասույզ կանգըն-
դանար: Չէի տեսած տակամին մարդ մը, որ ցագի և հուսահա-
տությունն այնքան բնկնած, այնքան ոչնչագած ըլլա: Կարծեն
կը լսեի իր հության փլիքը, կրանքի մը բայթայման բառմնելի
շառացը: Եվ այդ աղեխարշ փլուզումը արգիլելու անկարող, ան-
կարեկից հանդիսատեսց կըլլայի անոր, սառած, բարացած զրե-
թե....

— Ամերիկային մինչի հոս, շարունակեց խուզ ձայնով մը,
այս անգունդը շատոնց լափած կըլլար զիս՝ եթե վրեմբանդրու-
թյան կրակը լըլլար մերս....

Կը լսեի կուրծքին հերց, տաժանազին ու գժնզակ բան մը.
կը տեսնեի իր մարմինը տակնուպրա ընող մըրբիկը:

— Վերջապես ի՞նչ պատրահեցավ քեզի, պարո՞ն, Հարցուցի-գործին վախճանը իմանալու անհամբեր:

— Գացի Ամերիկա... Ի՞նչ երեցավ աշխիս այդ շքեղ ու ա-հազին երկիրը, ոչնչություն մը. վասնզի կինս հետո չէր, վասնզի՝ Հակառակի ինձի տրված բոլոր աղաւովություններուն՝ շարաշուր կասկածներ սիրուս կը խորշանգիրին. Հեռուն, Հայրենական գյուղս պրախտավայր կը թվիր ինձի, և ոյդ Ամերիկան կոշտ ու անհմաստ տեղ մը: Ինձի զրկած առարին նամակեն իսկ կինս կը զգացներ իր անհանգստությունը ծնողաց տանը մեջ: Բայց կտ-պահովեցներ զիս թէ պիտի Համբերեր, մեր ապագա փրկությանը Համար...: Ազեկի, մոլեգնորեն սկսած էի աշխատիլ. ի ոկզան-քի շահեցա, խնայողություն ըրի, հետ շատ շահեցա...: Արտի-էի, զուցե նպատակս իրազարծվեր...: Միակ միսիթարությունս, կնոջ նամակներն էին... անոնցման կը սեանիի, կտպրի այդ անտանելիք օտարության մեջ. Անցավ տարիունին. և ահա որ մը նամակի մը մեջ կինս կը հայտներ թե ծնողացը տոմի իրեն համար կատարյալ դժոխք մըն էր եղած...: Իր առողջությունն ալ այնքան լավ չէր Ամերիկան զիխուս գործավ...: Ի՞նչ ընեի, ի՞նչ կրնայի ընել այզքան Հեռուն, և մահովանդ զիանալով կնոշս զգուշավորությունը, Հեռուն՝ օտար երկրի մեջ զիս գառնացնել շուշերս իր մոռանողությունը, իրավամբ իննիտազրեի թե շատ-րան կը ժամկեր ինն, չշմարտությունը ամրազջությամբ չէր-րուիր Ե՞տ գառնայի. Բնուզավ գործու ու ապագայիս իրազուամբ նամակ նամակի վրա զրեցի, սիրա տալով, մանրամասնություն-ներ ուզելով: Հետո մեկ քանի ամիս լուր շառի իրմե... Զարա-շուր մտածումներ բզեզս տանիքին ու աշխատության կորովս երիալով կը ակարանար... Հետո նամակ մը տոի, սա նամակը (զրուանեն հոնելով ցույց տված ինձի), զերցին նամակը, պարոն, որ խեղճ կնոջս արցունքին մեջ թաթիսված էր և արդեն մա՛ կը հոտեր...: Կուզե՞ք որ ձեզի կարդամ...:

Եզ խոսակիցս բացավ նամակը, թուցած, բուրք՝ դարձած թղթի կտոր մը, և զութեա առանց վրան նայելու, լուսեի տժգույն-լուրսին մեջ կարդաց զայն, կամ ավելի՝ գոց բառվ զայն դողֆող-չուն ու լալազին ձայնով: Չեմ հիշեր լսած ըլլալ ազելի վշտալից

Ն ախուր բան մը բան այդ արտասվաճեղք նոժակին ընթերցումց Մարտիրոսություն մըն էր: Հոգիի տառապանք մը քիչ անգամ այդ-
բան որուածույզ, այդքան տպավորիչ կերպով արտահայտվում էր: Այդ նոժակը, պահ մը, իմ հոգիս ալ կը սպավորեր այնքան՝ որ-
բան այդ խեղճ մարդում...: Եվ երբ լծնցուց խօսակիցու զրեթե
ոչնչացած էր. շեր լոր. չեր հեկեկար զրերուն կը նայիր աշքե-
րուն տարօրինակ, զիվային ունեուումով մը. և ես վայրկյան մը
վախց թե մարդը խեղճացած կըլլա:

— Այդ նոժակե՞ն հորը, հարցուցի ուժոյին ձայնով մը,
մարդը սթափեցնելու համար:

— Ա՛յ ոչինչ,— խորոց, կոկորդը զելանված...: Այս՝ անկե
նորը ոչինչ...: Աշխատությունու խկույն զազրեցուցի, որովհետեւ
անկարելի էր աշխատեիլ...: Հետո, օրին մեկը, կեռոց շատ մռամբ
բարեկամուշիներն մեկը որ Ամերիկա կը գանցիր և Հոն ամռա-
նացած էր, կանչեց զիս, և ազելորդ ձեարանությունների հասու ի-
մացուց թե կինս մեռեր էր: Ի սկզբան չհավատացի, վտանգի չի
ուզեր հաշտովիլ այն գազափարին հետ թե կինս կրնար մեռնիր
նոժակը ցուցուց... իր մեռզբեն էր. ճիշդ էր ուրեմն. մեռեր էր
կինս... զուրս նետքիցա, փողոց փողոց քալեցի ժամերով. պահ
մը ժամանեցի անհետուզան ըլլալ. բայց ներքին ձայն մը կըսեր
ինձի թե հարկ էր վրեժ լուսել...: Վրեժ, այս՝, վրեժ կը գոռար
հույսան բովանդակ թափը այդ բառին մեջ սպառելով...:

Եվ կարմ գողարի մը ետք:

— Որովհեան պետք է, զիտեաք, պարուն, ավելցուց, թե
Հետո ավելիի պժգալիք և զարեւորելիք մահրամանություններ իմա-
ցա կեռոց այդ բարեկամուշիներն որոն կը գրեր եղեր կինս
ամեն բան խօսառվանելով անոյր...: Այզպես, իմացա թե քինա-
կալս, որոն տված հավաստիքները բաի ձեզ՝ կեռոց մասին,
նախկին գպրոցական ընկերալ և բարեկամու, այդ գրեշը ուզեր է,
փառձ փորձեր է... խեղճ ու անաեր կեռոց պատիսին դպչելու.
կրնար Երեակայել հուզում կինս մատնված ըլլալու և այդ
հրեշոյին փորձին համանոր...:

Խօսակիցս լուսնին նայեցավ, որ հիմակ երկինքին բարձրե-
րը ելած՝ պղամիցեր էր, ու ծովուն վրա սպիտակ զնարակուուց

Հետզհետե կը տժգուներ, ու բարձրացող թեթև հովք մեղմիկ ծփանք մը կը Հարուցաներ նավուն շուրջը: Բնաւթյունն ալ կարծես կը սպար հիմա իշխառը այդ մարդուն, զոր մխիթարելու բովանդակ անզորությունս կը հաստատեի:

— Բայց տակազին ավելի ահաւորը կա, Հարեց. գիտե՞ք ինչու կնոշս պատիմին վրա Հարձակմիլ փորձած է այդ սրիկան, որովհազի կինս ազգիելով, Հուզվելով, ցնցվելով հիվանդանա, բայցրայժի, մեռնի. այս, մեռնի, որպեսզի ծնողացը միակ ժառանգորդը իր կինը մնա, ու ինըը տիրանա այդ ամրոց Հարբաւության... Ահա հերմակ հասավ իր անարդ մուրատին...: Մեռավ կինս, ու ինը կը տիրանա աներուս բոլոր ստացվածքներուն...: Չի զիսեր թշվառականը թե պիտի զա զընեմի ժամը, արդար ու ահեղ զրեմին...:

Կև զիշերը անցած էր, ու խոնավությունը մինչև ոսկորները կը թափանցեր: Բուն փափաք մը ունեմ տար վերմակներու տակ կծկվելու, ու այս ցավազին պատմությունը զլատած էր հոգիս, ու հոգնած էի:

— Այսի եղե՞ր, բարեկամ, ըստ իրրե մխիթարանք... ինամե՞նի ինքիներդ, սեռնդ առ և քեացի՞ր:

— Քնանա՞լ, բասկ տեսակ մը զան քրիչով. իմ քունա մզկավանց մըն է, թափառում մըն է մութ և ամայի գերեզմանոցներու մեջ, կնոշս ուրժականը կը զիստոնմ, ու երբեմն կը տեսնեմ զիները՝ իր հերմակ պատանքին մեջ. կը մոտենամ իրնն զողդոց բայլերամբ բայց ան կը փախչի, ժպառն, զիսու օրորումով մը... կը փախչի ինեւ, հե՞ք սիրական կինս...:

Եվ մինչ լուս և բուն հեկեկանքներով կը նորվիկեր ան, անապարեցի հեռանայ, հեռանալ այդ մարդեն և այդ անհանդուրժելի ցավին...:

Զօրս ամիս եարը, գեկանեմբերի վերլերը, օր մը նստած էի Մեզրեի ասազնորդարանի սրահին մեջ: Երկու մարդեր ներս մըտան, Հարգանոր բարենցին տուշնորդը, Բուղթ մը տվին անոր և կեցան: Հանկարծ անենցմն մեկուն մեք ճանչցա Մետիի մարդը, որուն ցավազին սիլուեթը շատ անգամ քունս խռոված էր, և իր աղճխարչ կոժը ականչիս մեջ հաճախ կը դռնչեր: Անիկա հա-

բեանցի մը հայեցավ ինձի և ապահովապես շնչից զիս: Աղա-
դրությամբ հաստատեցի թե բոլորովին փոխված էր ան: Ի՞նչ
եղած էր արդյոք, մասնեցի, կեոչ մահվան լուրջ ստուգ չէ՞ր, և
զերադարձին ո՞չ զատէ էր զայն: Այլտպես ինչո՞վ կարելի էր
բացատրել իր մինչև իսկ զվարթ երևույթը: Ու միարա դրի, զորս
ելլելին ետքը ետևն երթալ, ինքնինքը ճանչցնել և տեղեկություն-
ներ տանել իր մասին:

Թայց ահա ուս խռակցությունը լսեցի, որ կյանքիս ամեննեն
ապշեցուցիչ անակնեալներն մեկը եղագ, և չզգորաշող չափա-
նիշը նաև մարդկային կասկածելի բարոյականին:

Առաջնորդը հարցուց.

— Ի՞նչ կուզեր:

— Պարոնին Համար ամուսնական Հրամանի մը, պատաս-
խանեց ան որ կընկերանար իմ մարդուս:

— Պարոնը նո՞ր կամուսնանա, հարցուց Առաջնորդը:

— Ո՛չ, պատասխանեց նույն մարդը. առջի կինը որ իմ քե-
նիս էր՝ մեռավ զժքախտաբար. Հիմա կուզե դարձյալ ամուսնա-
հալ ինձի ազգական աղքակա մը հետ. ես կերահայր կըլլամ իրեն,
որովհետև ո՞չ միայն քեննեկալ ենք այն պատիկուց զրեթե միա-
սին մեծցած....

Սարի խռարերը ա՛լ գրեթե լլսեցի, Հրամանի գործողությունը
կատարվեցավ և մարդիկը ելան գացին:

Ա՛լ ազելորդ սեպեցի ետևուն զորս ելլել, հարցնելու հա-
մար Մետին մարդուն թե ո՞ւր մեացած էր իր վրեմին զործողու-
թյունը:

Այս պատահարեն ի զեր միարա դրած եմ շհամատալ ամե-
նին զանաթուրմ ցավերուն իսկ:

ԳԵՐԱԴՈՒՅՆ ՆԵՐՈՒՄԸ

— Թյաթյուննե՞ն, սիկարա քեհատը՝ քա՞վ, քիպրի՞թ:

Հիմակ հազիվ տառներկու տարու կա թափիկ. երկու տարի
տուաց մեծ հայրը թենք բաներ ու գլորցեն դուրս հաներ էր՝ սա
որամարտնական շարժառիթը նետելով թռանց երեսին. ո՛ւս,
ուստանքը փուլ մը չըներ, հացերնաև փարան հանելու եայինը.
հայտն նայիմ, չի՞շտ, ո՞ու սա խութին:

Ա: Թափիկ կես մետր երկայնությամբ, քառորդ մետր լայ-
նությամբ և հինգ մետր բարձրությամբ սուսի մը կախեր էր ճի-
ման զար, որուն մեջ կային ծխախոտի զանազան մեծությամբ
տուփեր, սիկարի թուզին թերթիկներ ու լուցկիր սուփեր, զորո
պարտավոր էր փողոցի փողոց պարացնել, իր մանկային սուր,
կերկերահունչ ձայնովը զուխրով.

— Թյաթյուննե՞ն, սիկարա քեհատը՝ քա՞վ, քիպրի՞թ:

Մեծ հայրը նախ իր խոպատ ձայնովը կրկներ էր այս բացա-
զանչությունը, մեկ քանի անգամ. և մեկ քանի ապատակներ ալ
գործնականապես աղցքեազ թափիկի մասային ու ձայնային լարե-
րուն մրա, Հիմակ կազմած էին սույն եղանակագոր ելեկչով, եր-
րեմն մելանուշ, երրեմն սրտագուշ բացագանչությունը, որուն ար-
ձագաները կը թնգար փողոցներուն մեջ, առավելն մինչև իրիկուն,
ամառ, ձմեռ, մյունին ու անձրեին, մերթ սոյրակի մը գայլային
տպավորությունը թողլով, մերթ տիրառնունչ զայլոցը. Հիշեցնելով
սզատեսիլ բուին:

Խարխուլ, ողորմելի սենյակը, ուր մեծ հայրը ու թռակապրեին՝
պիլիտէ տան մը գետնահարկին կրծող խոնավությանը մեջ, ու-

շաղրամվ էր իր ներքին կարգ ու սարբովը, Յածիկի փողոցի մը
անկյունը, կորաբամակ ու ծերուկ մարդ մը նատած էր, երկայն սև
վերարկուի մը մեջ պահած իր ոսկրուս մարմինը որուն մեկ մա-
սըն անշարժության դատապարտված էր: Վշտալից տարիներ քան-
գակառործի մը Շերյունին նրբանքովը՝ ակոսներ փորփրած էին
անոր երեսին լերկ մաշկին վրա, անոզոք ոլորքներով, ճակտնե
մինչև վիզը:

Ռաֆիկին մեծ հայրն էր այս մարդը: Դեմքին գաճան ու
խեռ արտահայտությունը, մորթին փոթերեն շեշտվելով, ահարկու
տոպավորություն մը կը թազուր Պղտոր ապակիներով ու մանգո-
տած սպարմելի ակնոց մը ոսկրացից քիթին վրա կը հանգչեր
միշտ, այլն անքիթիթ հառած լուցկիի տասիներուն խառն ի խունն
զանգվածի մը վրա, որուն մեջ շարունակ կը պատրասին իր չոր
ու ծովակած մատները, լեցուն տուփերեն գողնալով ու պարսպ-
ները լիցնելով: Իր չիշդ բովք, զիտնին վրա կը պատկեր երկայն
ու գալագան մը, որ իր անթացուպն էր, և ի հարկին, իր ահար-
կու զենքը, որուն հատկությունները խզնի մասք սերտած էր
փոքրիկ Ռաֆիկը:

Ուրիշ մանր-մունք առարկաներ կը դառնվեին այդ գարշահոտ
խունին մեջ, երկու երեք մրուտած փոքր սաներ, կրտսերան, մը,
որժագարանի մը մեջ կանթեղ մը, մեկ երկու պիտիներ, գին գեղ-
նած սաղմոս մը, և այլն:

Տախտակամածը ծածկված էր եղի ու կերակուրի թափթփուր-
ներու ահազին արատներով: Երկու պատուհաններուն ապակիները
կերեային՝ փոտած նաթուտած զարագույրներու մեջին, ազտատ ու
փոշեթթաթավ: Այդ գարշելի խուցին մեջ թափանցող ն-ազկուտ
լուցոր թախտելու տիգրություն մը կը ցաներ Հռն, առարկաներու
զիժերը տարտղնելով, իրար խառնելով, ու սրտամորմոք ամրող-
ջություն մը արտազրելով: Աւ այս ամենուն մեջ, շարժուն միակ
բանը, բազմոցի մթազգած ծերուկին երկար, ոսկրուս մատներն
էին որոնք դողդողուն զժեր ու շրջաններ կը ձեմացնեին օգին
մեջ, լուցկիի տուփերուն մեկն մյուսն երթայով շարունակ,
լուցկիի կույտեր կազմելով պարագ տուփերուն համար, որոնք իր
բացեն շահը կը ներկայացնեին, և որնց վրա կը հասեին իր

միաշող խաժ աշվըները, թագաստն սպիտակախառն հոնքերուն
տակին:

Հաճի Մարտիրոս կոկիծ տեսած մարդ էր, հաստարուն կող-
նի որևս մինակի ինք անխախտ մնալով այն մահարույր քամինե-
րուն զեմ որոնք բիցու ուժգությամբ առեր տարեր էին իր մայշեր-
ներու, Հետզհետե պարտապություն բիրելով իր շուրջը, խեղաւ-
թյուն սիռելով:

Եվ կոկիծն ալ կարծրացնելով այդ ժերացած գառնացած
սիրու, անտարբերություն, առսկայի անզգածություն տուաչ բերիր
էր Ա՛լ մահման ամերներն ընած առսկում շամեր հիմակ, ամեն
բան եղած ընցած էր. ինքը կմնար ու իր Թափիկ թոռը, որուն
գոյությանը միայն անոր համար կարեոր էր իրեն, զաւազի անոր
աշխատանքն արդյունքով կապրեր, ինք ամելի գուշ կըլլար, Եթե
ան ալ մեռներ: Այ կարծեր, որ իրեն կը հիշեցներ իր բոլորտի-
քեն անհնացած զեմքերը. ու իրը մերժեցնեն զերնառ տղան,
Հաճի Մարտիրոս պիտի ըսեր թե տառնկ եկած է աշխարդի վրա-
միս մինակ ու տառնկ պիտի երթաւ:

Իր կյանքը աշխարհի վրա կենարոնացած էր լուցկիներու,
սիկարի թուղթերու և ծխախոտի տուփերու մեջ, զորս առողջինն
մինչեւ իրիկուն մատներուն մերեն կանցըներ շոյելով ֆայփայե-
լով ու շակրաելով տերնգնատ, իր միտքն հոգնեցնելով միայն
այն ապօքեն միջոցներուն վրա որոնցմով կրնար ավելորդ շահ-
մը ըներ:

Տարի մը առաջ, երր իրիկուն մը կռուփի հարժածներ կիշեց-
ներ գորգիկ թափեկին, Հանկարծ թուղություն մը զպացեր էր
ձախ կողմին վրա, ու մասնակի անզամալուծություն մը անզգա-
յացուցեր էր իր ձախ ոտքն ու ձեռքը: Բազուկը մասամբ տող-
շոցեր էր, բայց ձախ սրունքը նույնը կը մնար միշտ ու այս
պատճառով խուցին մեջ մտեր էր այն խոշոր անթացուպը, որ
մշմարիտ պատռւած մըն էր եղած թափեկի գլխուն:

Մութը կը կոխեր, նոյեմբերի ցրտախառն այն մութը որ
մռալով ու թախծությամբ շինված է: Հաճի Մարտիրոս ակնոցը
Հաներ էր, ու իր պղասը աշբերովը փողոցը կը գիտեր, երբեմն
քթին տուկեն մրժալով.

— Աս լոկուաց վուր մեաց, ա'խ էյնը նորեն պակառ է նե...

Ու աչ ձեռքովք անթացուզը կը շայնը, գեմքի ազետալի ծա-
մածուուով մը:

Հանկարծ ժերունին վեր առավ զլուխը, որսի շան մը
պես ականքները տնկելով. իրիկնամուսի հարանուն հանդրուու-
թյան մեջն հեռավոր սրտագոշ ձայնի մը արձագանքը լսվեցավ
—... Քեհատը, քիպրի՞թ...

Ծերունին նվազկոտ աշրերուն մեջ չողյուն մը փայլեցավ ու
անմիշտապես մարեցավ:

— Ան է, մրմաց ու գոզդովք ձեռքովք շոշափեց իր անթա-
ցուզը, որ անորոշ կերպով կուրժագծվեր սենյակին մութ հառա-
կին մնաւ:

Մեկ քանի վայրկյան եռքը խարխու դրան բացվիր կը
լսվեր ու ծերունին նստած սենյակին սեմին վրա երեսն կու-
գար, զգույշ ու վախելու շարժումներով վորք մարմինը մա-
փիկին, պիզեն կախված ունենալով իր քառակուսի տուփը:

Հագիզ երեցած էր, ծերունին խնդրուկ ձայնով մը որոշաց.

— Սո մափիկ, ինչո՞ւ ուզ մնացիր:

Տզան վարանեցամ, գողաց, շուրթները շարժեց ու կմկմոց.

— Տեսի, մյուշաների կլավ...

— Վա՛յ, բեր աղեկ, հօս բեր նայիմ, ի՞նչ ծախեցիր...

Մափիկ թիշ մը բաշտարտված, հառաջացավ մինչև ծերունին
ցած բազմոցին առէ ու վիզեն հանեց տուփին կապը:

Դաժան ծերուկը շմարտիլը վառեա պոռաց, մինչև իր
գոզդոց մատներն արդին սկսած էին ու խարխափ շոշափել առ-
փին մեջ եղածները, ու քիշն առկեն կը մոլուր.

— Մեկ, երկուք, երեք...

Մափիկ վազեց որմագարանին մեջն առավ կանթեղը, սըր-
տակոզավ վառեց զայն ու բերավ զրավ մեծ հորը մոտ, բազմոցին
վրա: Կաթիթեղը սկսավ պլոյալ իր գորշ կարմիր բացեն արձակե-
լով յուղու ծուխ մը, որ ցած ձեղումը կերկարեր մինչև, ու եր-
բեմն իր տառանումներուն մեջ շիրնալով ուզգակի վեր ելլել՝
ծերունին հակառը կը ։ Պարշ հոտ մը սկսավ տարածվել
սենյակին մեջ:

Համակ Համի Մարտիրոսի կռնակը կլորցած էր տուփին վրա, ունեցող զինված աշքերը սոսկալի սննդումով կը զիտեին լուց կիբ, ժխախոսով տուփերն ու թուզի թերթիկները, զոր աշ ձեռքին գողացող ազատ մատներով կը համրեր, բազմատեղով զանոնք գեղնած թուզի կտորի մը վրա երևող ծուռտիկ-մուռտիկ թվանշաններու համ: Թիւ մը անդիւք կեցած էր մագիկ աշքերը սարսափի բուն արտահայտությամբ մը հառած տուփին վրա, շուրջները սարսառմ, վերահաս փոթորիկի մը սոսկումներով համակի: Սերունին անհօգազգ, աշխարհիքն անդիտակ, իր կենաւկան գործին քննությանը փաթթված հոգով մարմեռով, ձայն-ձուն չէր հաներ, կանթնդին երեսմ անփայլ լույսին մեջ աշխատելով, որուն ան ծովար երբեմն իր ճերմակ լիրկ գանկը կը լզվուեր: Հանկարծ վեր տուավ զլուխը, ձեռքերը գորա հանեց տուփեն, և ցսող:

— Մախամեներուց փարա^ն...

Թափիկ գողաց, ձեռքը իր բանեկոնին զրպանը խոթեց ու շատ մը մանրուր զրամներ գուրա հանելով թափեց բազմոցին վյաժերունին առալլուուկ գալիք մը պես որ իր ճանեկերը կը նետե որպային վրա, հագիշտակեց առավ զրամները և սկսավ համրել իր կոչկոռու ափին մեր:

Այդ միջոցին խեղճ մագիկին երեսը նայողը անպատճառ մեռած պիտի կարծեր զայն. չէր գողար, մարմինը սառած էր կարծես ու զեմքը դիտի գույն:

Եվ մեկեն ի մեկ բան մը տեղի ունեցավ սենյակին մեջ, անգութ, սրաամմիկ բան մը. կանթնդին ժխարձակ բոցը ա'ւ կը տատաներ խոլ շարժումներով. Համի Մարտիրոս իր անդը չէր. հիմակ անոր հումկու հասակը կը ցցվեր սենյակին մեջ, աշքերը բոցարձակ, ճերմակ մազերը գանկին վրա խառնաման ու սե, ահարկու անթացուողն իր ձեռքերուն մեջ որ կելլեր կայժակի սլացումներով, ամեն մեկ էլլին չոր աղմաւկ մը և սրտակառը մեջ հանելով, որ կերկարածգվեր մինչև հաջորդ հարվածը, նույն արձակվելու համար ամելի բարձր, ավելի աղեկառը:

Համի Մարտիրոս իր թուր կը ծեծեր: Տուփ մը լուցիք և տուփ մը ձխախոս պահսած էին, անշուշտ շարտնի սամբակը

ժախած էր զանոնք և ստակովը պառող գետք ու կերած էր. մեծագոյն ոճիցը ընչեղ ծերտամիջն համար, և այս քանի՛ երորդ անգամն էր. երկու երեք օրն Շեղ մը այս հանցաները կը գործեր թափիկ, ամեննեին շուզզվելով կերած սոսկալի ծեծերեն, ու երթալով ծերտամին կը կատազեր, կը սաստկացներ իր հարզածները, որ մը և զիշեր մը անոթի կը ձգեր տղան և սակայն չէր կրնար առաջքն առնել այդ աղետին:

Եզ խեղճ տղան նզիկ ճշիկ գալով կը պռոշտար.

— Աման տեսե... ստկա պագեմ, տեսե... էս շատի... և շնողտա...

